ներից մինը, Բարսամը, Զոջանց տան վէպն ասելուց յետոյ՝ վերջն աւելացնում է իրրև «բարեխօս» 90-ից աւելի սրբավայրերի, սրբերի, վանքերի, ժամերի, նարեկների, աւետարանների և խաչերի անուններ (№ 10, էջ 450—462)։

§ 6. Այժմ անցնենք մեր № 14-ին. որ ոչ միայն այս երեքից, այլև հրատարակուած բոլոր փոփոխակներից ամենահետաքրքրականն է։ Նախ բարբառը, Հայոց ձորի, նոր է. ունի բացի աշխարհագրական նոր յատուկ անուններից և անձնանուններ, մանաւանդ կանանց։ Սոցանից մի քանիսը հաւանօրէն լոկ գովասական մակդիրներ են, ինչպէս որ քառասուն-ճող-ծամ շատերի մակդիրն է. և մի քանի փոփոխակներում դարձել է յատուկ անձնանուն. մինչդեռ տղամարդկանց մակդիրը կրկնւում է միշտ անձնանուան հետ. Զէնով Յովան, Սարգիս, Յոան Վէգօ, Զոջ և Պատիկ Դաւիթ, Մէր, Առիւծաձև Մէր, Թառլան—Թլոր—Թլուատ Դաւիթ, Ճոռ Վիրապ, խոր-Գուսան, Վժիկ Մխօ և այլն։ Եւ ինչպէս այդ մակդիրները դիւցազների այս կամ այն յատկութեան բնորոշ արտայայտիչն են, այնպէս էլ կանանց անունները նոցա գեղեցկութեան. այսպէս Սիւռաթ=պատկեր, Կիւլակ=խոպոպիք կրող, Կիւլիղար կամ Կիւլլիղար=վարդոսկի, Խանդուտ կապւում է խանդ, վառվռուն բառի հետ և Սառան, Սինամ (անշուշտ Սանամ, որ շփոթուել է № 6-ի Սինամ—քերիմ՝ Սենեքերիմ արական անուան ազդեցութեամբ) այսօր էլ հայ կանանց գործածական անուններ են։

Ինչպէս սոքա այնպէս էլ Գոհար (№ 3 Ա, Պաճիկ՝ թագաւորի աղջիկ, և № 7, 10, 16), Դեղձուն (№ 3 Բ, 10 Բ), Շիրին Անախուն Գիւհար (№ 11), Փիրզատ և Նազլու (№ 13) մնում են անյայտ, թէ ինչ պատմական անձեր են, գլխաւորապէս այն պատճառով, որ մեր պատմութիւնը կանանց շատ քիչ տեղ է տուել, ուստի և կանանց քիչ անձնանուններ են յայտնի։ Հազիւ ուրեմն Շմշիկ (№ 12) և Իսմիլ (№ 4, Գ, էջ 80—83) կամ Իսլիմ[2] անունների մէջ հնչւում է Շամիրամ և Իշտար անունների հետքերը, որ

---

1. Գ. Փարպեցին ունի «Պանոկ ի Մարզպետական գնդէն» (Պատմ. Գ. Գ., էջ 162. Էջմիածին—Տփղիս 1904). այսինքն ցեղից (gens,-tis)։ Սա Վահանի «ուխտակից»ներից էր. որ գնաց պատգամաւոր Նիխորի մօտ։ Հետաքրքրական է որ այս պատգամաւորների մէջ է Մամիկոնեանց խնամի Կամսարականը. այստեղ էլ հաւանօրէն մարզպետական—Արծրունիների Մամիկոնեանց հետ ունեցած խնամութեան հետքն է.—պատմութիւնից յայտնի.—որ պահել է վէպը։

2. Գր. Բայատեան. Սասունցի Դաւիթ. պատմական պոէմ. VII, էջ 12. Թիֆլիզ 1905։